

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____**

**SECURITIES CUSTODY
AGREEMENT N _____**

ք. Երևան

_____20__թ.

Yerevan

_____20__

Անուն, ազգանուն (այսուհետ նաև՝ Հաշվետեր), մի կողմից, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերությունը (այսուհետ նաև՝ Կենտրոնական դեպոզիտարիա), ի դեմս գլխավոր տնօրեն Անի Մակարյանի, ով գործում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության հիման վրա, և «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Հաշվի օպերատոր) (դեկլարավելով 26.09.2022թ.թվականին կնքված «Հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի կարգավիճակի շնորհման» թիվ ՀԱ-44 պայմանագրով և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, որը սույն պայմանագրի կնքման շրջանակներում գործում է նաև Կենտրոնական դեպոզիտարիայի անունից), ի դեմս Գլխավոր տնօրեն Միքայել Մարգարյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ նաև առանձին հիշատակման դեպքում՝ Կողմ, միասնաբար՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Name, surname (hereinafter also: the Account Holder), on the one hand, and “Central Depository of Armenia” OJSC (hereinafter also: the Central Depository), represented by General Director Ani Makaryan, acting on the basis of the Charter of the Central Depository, and Cube Invest CJSC (hereinafter also: the Account Operator) (acting based on the agreement “On Granting Status of a Member of the Unified System of Securities Registration and Settlement” number ՀԱ-44, dated 26.09.2022, and the rules of the Central Depository, who, within the scope of this agreement, also acts on behalf of the Central Depository), represented by General director Mikayel Margaryan, who acts on the basis of the Charter, on the other hand, (hereinafter also separately: the Party, jointly: the Parties), have entered into this Agreement (hereinafter also: the Agreement) on the following:

1. Պայմանագրի առարկան

Subject of the Agreement

- 1.1. Սույն Պայմանագրով Կենտրոնական դեպոզիտարիան պարտավորվում է Հաշվետիրոջ հանձնարարությամբ և Հաշվի օպերատորի միջնորդությամբ Հաշվետիրոջը մատուցել ՀՀ օրենսդրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով նախատեսված՝ արժեթղթերի պահառության ծառայություններ (այսուհետ նաև՝ Ծառայություններ), իսկ Հաշվետերը պարտավորվում է վճարել մատուցվող Ծառայությունների համար:
- 1.2. Սույն Պայմանագրով մատուցվող բոլոր ծառայությունները Հաշվետիրոջն են մատուցվում Հաշվի օպերատորի միջնորդությամբ:
- 1.3. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև սույն

By this Agreement, the Central Depository undertakes to provide securities custody services (hereinafter also: the Services) as defined by the legislation of the Republic of Armenia and the rules of the Central Depository, upon the instruction of the Account Holder and through the mediation of the Account Operator, and the Account Holder undertakes to pay for the provided Services.

All services provided under this Agreement are rendered to the Account Holder through the mediation of the Account Operator.

Matters not regulated by this Agreement, as well as the full scope of rights and

Պայմանագրի առարկայի հետ կապված՝ Կողմերի իրավունքների և պարտավորությունների ամբողջությունը սահմանվում և կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով (այսուհետ նաև՝ Իրավական ակտեր), որոնց Հաշվետերը ծանոթ է և Պայմանագրի շրջանակներում իր գործողությունների ընթացքում պարտավորվում է ղեկավարվել դրանցով:

obligations of the Parties related to the subject of this Agreement, are determined and regulated by the Law of the Republic of Armenia “On Securities Market”, Regulation No. 5/10 “On Securities Centralized Registry and Custody” of the Board of the Central Bank of Armenia, and the rules and regulations of the Central Depository and the Account Operator (hereinafter also: the Legal Acts), which the Account Holder is familiar with and agrees to be guided by in their actions under the scope of this Agreement.

2. **Պայմանագրում օգտագործվող հասկացությունները**

Concepts Used in the Agreement

2.1. Եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ, ապա Պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն այն նշանակությունը, որը սահմանված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» թիվ 5/10 կանոնակարգով և դրանց հիման վրա ընդունված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոններով և կանոնակարգերով:

Concepts used in this Agreement shall have the meanings defined by the Law of the Republic of Armenia “On Securities Market”, Regulation No. 5/10 “On Securities Centralized Registry and Custody” of the Board of the Central Bank of Armenia, as well as by the rules and regulations of the Central Depository and the Account Operator adopted based thereon, unless otherwise defined by this Agreement.

3. **Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

Rights and Obligations of the Parties

3.1. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է.

The Central Depository undertakes:

3.1.1. Ապահովել անհրաժեշտ տեխնիկական և իրավական պայմաններ, որպեսզի Ծառայությունները մատուցվեն պատշաճ որակով և ամբողջ ծավալով, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված ժամկետներում և կարգով:

To provide the necessary technical and legal means for rendering the Services properly and in full, within the terms and procedures stipulated by the rules of the Central Depository.

3.2. Հաշվի օպերատորը պարտավոր է.

The Account Operator undertakes:

3.2.1. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունները միջնորդավորել և

To mediate and render the services of the Central Depository to the Account Holder in

- Հաշվետիրոջը մատուցել պատշաճ որակով և ժամանակին՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի կանոնների:
- proper quality and in time - in accordance with the legislation of the Republic of Armenia, the normative legal acts of the Central Bank of Armenia, and the rules of the Central Depository and the Account Operator.
- 3.2.2. Օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց և Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո (Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնների դեպքում) եռօրյա ժամկետում Հաշվետիրոջը տեղեկացնել Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի այն կանոնների մեջ կատարվող փոփոխությունների մասին, որոնք վերաբերում են սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների մատուցման ժամկետներին, կարգին և գնին: Սույն կետի իմաստով պատշաճ տեղեկացում է համարվում համապատասխան տեղեկությունները Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքում գետեղելը:
- To notify the Account Holder of any amendments to the rules of the Central Depository and the Account Operator that relate to the terms, procedures, and prices of the Services provided under this Agreement within three days after they enter into legal force as established by the legislation and are published on the official website of the Central Depository (for the rules of the Central Depository). For the purposes of this clause, proper notification is considered to be the posting of the relevant information on the official website of the Account Operator.
- 3.3. Հաշվետերը պարտավոր է.
- The Account Holder undertakes:
- 3.3.1. Հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիային տեղեկացնել իր կողմից տրամադրված տվյալների (այդ թվում՝ սույն Պայմանագրի 9.6 կետում նշված լիազորված անձանց վերաբերյալ տվյալների) հետ կապված անճշտությունների, փոփոխությունների, լրացումների մասին, ինչպես նաև տրամադրել դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր:
- To notify the Central Depository via the Account Operator within 2 (two) business days of becoming aware of any inaccuracies, changes, or additions to the information provided by the Account Holder, including information on the authorized persons specified in clause 9.6 of this Agreement, and to submit the appropriate supporting documents.
- 3.3.2. Իրավաբանական անձ Հաշվետիրոջ դեպքում հայտնի դառնալու պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի միջոցով Կենտրոնական դեպոզիտարիային տեղեկացնել Հաշվետիրոջ վերակազմակերպման, լուծարման կամ սնանկ ճանաչման գործընթացների մեկնարկի, ինչպես նաև ավարտի մասին:
- In the case of a legal entity Account Holder, to notify the Central Depository via the Account Operator within 2 (two) business days of becoming aware of the initiation or completion of any reorganization, liquidation, or bankruptcy procedures related to the Account Holder.

- 3.3.3. Մատուցված ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով և չափով: To pay for the Services provided under this Agreement in accordance with clause 4.1 of this Agreement.
- 3.4. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի: The Central Depository is entitled:
- 3.4.1. Հրաժարվել սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումից, եթե Հաշվետիրոջ կողմից խախտվել են սույն Պայմանագրի 4-րդ գլխի պահանջները: To refuse to fulfill its obligations under this Agreement if the Account Holder violates the requirements of Chapter 4 of this Agreement.
- 3.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող՝ արժեթղթերի պահառության գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ռիսկերը բացառելու և օտարերկրյա պետությունների նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության համադրման նպատակով) և կարգով Հաշվետիրոջ վերաբերյալ տեղեկություններ տրամադրել Կենտրոնական դեպոզիտարիայի կոնտրագենտներին և/կամ ՀՀ և օտարերկրյա իրավասու մարմիններին: In the cases and in the manner established by the legislation of the Republic of Armenia, as well as by the legal acts governing securities' custody operations carried out by the Central Depository (including for the purpose of eliminating risks related to money laundering and terrorist financing and coordinating information on the fulfillment of tax obligations to foreign countries) - to provide information regarding the Account Holder to the counterparties of the Central Depository and/or to competent authorities of the Republic of Armenia and foreign countries.
- 3.5. Հաշվի օպերատորն իրավունք ունի: The Account Operator is entitled:
- 3.5.1. Հետևել Հաշվետիրոջ կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը: To monitor the fulfillment of the Account Holder's obligations under this Agreement.
- 3.5.2. Հրաժարվել սույն Պայմանագրի 3.2.1 կետով սահմանված կարգով ծառայությունները մատուցելուց, եթե Հաշվետիրոջ կողմից խախտվել են սույն Պայմանագրի 4-րդ գլխի պահանջները: To refuse to provide the Services stipulated in clause 3.2.1 of this Agreement if the Account Holder violates the requirements of Chapter 4 of this Agreement.
- 3.6. Հաշվետերն իրավունք ունի: The Account Holder is entitled:
- 3.6.1. Կենտրոնական դեպոզիտարիայից և Հաշվի օպերատորից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների ժամանակին, պատշաճ որակով և լրիվ ծավալով մատուցում: To demand that the Central Depository and the Account Operator provide the Services stipulated under this Agreement in a timely manner, with proper quality, and in full.

4. Մատուցվող ծառայությունների գինը և վճարման կարգը	Price and Payment Procedures for the Services
4.1. Հաշվետերը սույն Պայմանագրով մատուցված/մատուցվող Ծառայությունների համար վճարումները կատարում է Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններին և դրանց հիման վրա ընդունված՝ Հաշվի օպերատորի սակագներին համապատասխան՝ դրանցով սահմանված կարգով ու ժամկետներում: Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին» կանոնները և Հաշվի օպերատորի սակագները գետեղված են Կենտրոնական դեպոզիտարիայի և Հաշվի օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքերում:	The Account Holder shall make payments for the Services provided/being provided under this Agreement in accordance with the rules “On Tariffs” of the Central Depository, and the tariffs of the Account Operator adopted on the basis of these rules, within the terms and procedures specified therein. The rules “On Tariffs” of the Central Depository and the tariffs of the Account Operator are published on the official websites of the Central Depository and the Account Operator.
4.2. Հաշվետերը պարտավոր է վճարել սույժ՝ սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին» գործող կանոններով և Հաշվի օպերատորի սակագներով սահմանված չափով և կարգով:	The Account Holder is obligated to pay penalties for the failure to perform or improper performance of the obligations stipulated in clause 4.1 of this Agreement, in the amount and manner specified by the rules “On Tariffs” of the Central Depository and the tariffs of the Account Operator.
4.3. Հաշվի օպերատորն իրավունք ունի Հաշվետիրոջ կողմից սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված վճարումները ուշացնելու դեպքում վճարման ենթակա գումարները անակցեպտ կարգով գանձել Հաշվետիրոջ՝ Հաշվի օպերատորի մոտ գտնվող այլ դրամային, արտարժույթային կամ դեպո հաշիվներից:	The Account Operator is entitled, in the event of a delay in the payments stipulated in clause 4.1 of this Agreement, to collect the amounts due from the other cash, foreign currency, or depo accounts held by the Account Holder with the Account Operator, without authorization from the Account Holder.
5. Կողմերի պատասխանատվությունը	Liability of the Parties
5.1. Հաշվետերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Կենտրոնական դեպոզիտարիային տրամադրված տվյալների հավաստիության համար:	The Account Holder shall be liable for the accuracy of the information provided to the Central Depository in accordance with the legislation of the Republic of Armenia.
5.2. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Հաշվետիրոջ կրած վնասների համար,	The Central Depository shall not be liable for any damages suffered by the Account Holder due to actions performed in connection with the provision of the services stipulated in this Agreement if such actions were carried out in accordance with

- երես նշված գործողությունները կատարվել են Իրավական ակտերով սահմանված հանձնարարականների հիման վրա:
- the instructions established by the Legal Acts.
- 5.3. Կենտրոնական դեպոզիտարիան պատասխանատվություն չի կրում Հաշվի օպերատորի միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Հաշվետիրոջ կրած վնասների համար:
- The Central Depository shall not be liable for any damages suffered by the Account Holder due to actions performed in connection with the provision of the services stipulated in this Agreement through the mediation of the Account Operator.
- 5.4. Հաշվի օպերատորը պատասխանատվություն է կրում իր միջնորդությամբ սույն Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման հետ կապված՝ ոչ իրավաչափ գործողությունների իրականացման հետևանքով Հաշվետիրոջը պատճառված վնասների համար:
- The Account Operator shall be liable for any damages suffered by the Account Holder due to unlawful actions performed in connection with the provision of the services stipulated in this Agreement through the mediation of the Account Operator.
- 5.5. Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն Պայմանագրի կնքումը Հաշվետիրոջ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը վարող, արժեթղթերի պահառություն իրականացնող անձանց գործողությունների համար:
- The Central Depository and the Account Operator shall not be liable for the actions of securities custody service providers or registry keepers of securities owners (nominee holders) performed prior to the conclusion of this Agreement.
- 5.6. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա Կենտրոնական դեպոզիտարիան Հաշվետիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար միայն այն դեպքում, եթե դրանք առաջացել են Կենտրոնական դեպոզիտարիայի մեղքով:
- If the Central Depository failed to perform or improperly performed its obligations under this Agreement, it shall be liable for any damages suffered by the Account Holder only if such damages were caused by the fault of the Central Depository.
- 5.7. Սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը
- The Parties shall be released from liability for non-performance or improper performance of their obligations under this Agreement if such non-performance or improper performance was due to force majeure circumstances that arose after the conclusion of this Agreement and that the Parties could not have foreseen or prevented.

Կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել:

6.	Պայմանագրի գործողության ժամկետը	Term of the Agreement
6.1.	Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:	This Agreement enters into force upon its conclusion and is valid for an indefinite period, and may be terminated only in cases and procedures provided by the legislation of the Republic of Armenia and other applicable legal acts.
7.	Տեղեկատվության գաղտնիությունը	Confidentiality of Information
7.1.	Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել սույն Պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ կիրառելի իրավական ակտերով և/կամ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:	The Central Depository and the Account Operator are obligated to maintain the confidentiality of the information stored in accordance with this Agreement and are entitled to provide such information to third parties only in cases and procedures provided by the legislation of the Republic of Armenia, other applicable legal acts, and/or this Agreement.
7.2.	Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների չափով, պատասխանատվություն են կրում սույն գլխով սահմանված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ բացահայտման համար:	The Central Depository and the Account Operator shall be liable for the improper use or disclosure of information stipulated in this Chapter, to the extent of the actions performed by each party.
8.	Ծանուցագրեր	Notifications
8.1.	Կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրությունները, բացառությամբ սույն Պայմանագրով և/կամ Իրավական ակտերով նախատեսված դեպքերի, պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված իրավաբանական անձի կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված էլեկտրոնային իրավասու հասցեից, կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքին համապատասխան:	Unless otherwise stipulated by this Agreement and/or the Legal Acts, notices and communications between the Parties under this Agreement must be carried in written form, be signed by authorized persons and sealed by legal entity's seal (if any), delivered in person (with making a written note of acknowledgment of receipt by the addressee), by eligible electronic address or in accordance with the Law of the Republic of Armenia "On Special Delivery of Documents".
9.	Այլ դրույթներ	Other Provisions

- 9.1. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը: The law of the Republic of Armenia shall apply to this Agreement.
- 9.2. Սույն Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով և/կամ Իրավական ակտերով: Amendments or supplements to this Agreement may only be made with the mutual consent of the Parties, in writing, unless otherwise stipulated by this Agreement and/or the Legal Acts.
- 9.3. Սույն Պայմանագրի Կողմն իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն Պայմանագրով իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և այլ կիրառելի իրավական ակտերով այլ բան սահմանված չէ: A Party may transfer its rights and obligations under this Agreement to another person only with the written consent of the other Parties, unless otherwise provided by the legislation of the Republic of Armenia and other applicable legal acts.
- 9.4. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև Կողմերի միջև սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, ՀՀ իրավասու դատարանների կողմից: Matters not regulated by this Agreement, as well as any disputes between the Parties related to this Agreement, shall be resolved in accordance with the legislation of the Republic of Armenia by the competent courts of Armenia.
- 9.5. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն, 2 (երկու) հավասարազոր իրավական ուժ ունեցող օրինակից, մեկ օրինակը՝ Հաշվի օպերատորին, մեկը՝ Հաշվետիրոջը: Սույն Պայմանագրի անգլերեն և հայերեն լեզուներով տարբերակների միջև մեկնաբանությունների հակասության կամ տարրնթերցման դեպքում հայերեն տարբերակը գերակայում է: This Agreement is made in Armenian and English, in 2 (two) copies having equal legal force – one copy for the Account Operator, one for the Account Holder. In the event of a conflict or discrepancy between the English and Armenian versions of this Agreement the Armenian version shall prevail.
- 9.6. Պայմանագրի Կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն Պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը: The details of the authorized representatives of the Parties are attached to this Agreement and are an integral part of it.
- 9.7. Հաշվետերը հավաստում է, որ սույն Պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին, չունի առարկություններ դրանց վերաբերյալ: The Account Holder confirms that they have reviewed the rules of the Central Depository, the rules of the Account Operator, and other necessary legal acts before signing this Agreement and have no objections thereto.

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները
Preconditions and Signatures of the Parties

Հաշվետեր/The Account Holder

Անուն ազգանուն/Name, surname
Անձնագիր/Passport: _____
Տրված/Date of issue: _____
Ծնված/Date of birth: _____
ՀԾՀ/SSN: _____
Հասցե/Address _____
Հեռ./Tel. _____
Էլ. հասցե/E-mail: _____



Ստորագրություն / Signature

Կենտրոնական դեպոզիտարիա/The Central Depository

**«Հայաստանի կենտրոնական
դեպոզիտարիա» ԲԲԸ/“Central Depository
of Armenia” OJSC**

Գրանցված է ՀՀ կենտրոնական բանկի
կողմից, գրանցման համար՝ 1/Registered by
the Central Bank of Armenia, registration
number: 1

ՀՎՀՀ/TIN: 02555643

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
26/1, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-
րդ հարկ/Address: 26/1 Vazgen Sargsyan str.,
5th floor, Erebuni Plaza Business Centre,

Yerevan, Armenia

Հեռ./Tel.: +374 60 615555

Էլ. փոստի հասցե/Email address:
info@amx.am

Կայք/Website: www.cda.am

Հաշվի օպերատոր/The Account Operator

**«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ/
Cube Invest CJSC**

Պետական գրանցման համար/State
Registration Number: 13

ՀՎՀՀ/TIN: 02657619

Հասցե/Address: ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան
10 / 10 V.Sargsyan street, Yerevan, RA

Հեռ./Tel.: +374 11 800 810

Էլ. փոստի հասցե/Email address:

backoffice@cubeinvest.am

Կայք/Website: www.cubeinvest.am

Ստորագրություն / Signature

Կողմերի լիազորված անձինք/Authorized Representatives of the Parties

Հաշվետիրոջ լիազորված անձինք/Authorized Representatives of the Account Holder

Անուն, ազգանուն / Name, Surname	Անձնագրային տվյալներ / Passport Details	Պաշտոն / Position	Հեռախոս / Phone Number	Ստորագրության նմուշը / Signature Sample

Լիազորված անձինք իրավունք ունեն կատարել հետևյալ գործողությունները (նշում կատարել քառակուսու մեջ)/Authorized representatives have the right to perform the following actions (mark in the checkbox):

- ☐ Տալ հանձնարարագրեր/Submit instructions.
- ☐ Ստորագրել դիմումներ, պայմանագրեր և համաձայնագրեր/Sign applications, contracts, and agreements.
- ☐ Ներկայացնել փաստաթղթեր/Submit documents.
- ☐ Ստանալ ռեեստրից քաղվածքներ, ինչպես նաև այլ փաստաթղթեր/Receive extracts from the registry and other documents.
- ☐ Այլ գործողություններ (թվարկել)/Other actions (specify).

Հաստատում եմ/Confirmed _____

Հաշվի օպերատորի լիազորված անձինք/Authorized Representatives of the Account Operator

Անուն, ազգանուն / Name, Surname	Պաշտոն / Position	Հեռախոս / Phone Number	Ստորագրության նմուշը / Signature Sample

Հաստատում եմ/Confirmed _____

Սույն ցուցակներն իրավական ուժ ունեն միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում/These lists have legal force only when accompanied by a valid identification document.